ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան 20 հոկտեմբերի 2021 թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կոլեկտիվ պայմանագրի կողմերն (այսուհետ՝ Կողմեր) են «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ համալսարան)՝ ի դեմս ռեկտոր Դ.Գալոյանի (այսուհետ՝ Գործատու) և համալսարանի աշխատողների կոլեկտիվը՝ ի դեմս արհեստակցական կազմակերպության (այսուհետ՝ Արհմիություն) նախագահ Ա.Պետրոսյանի:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հարցերի շրջանակներում Կողմերի ձեռք բերած փոխհամաձայնության հիման վրա սույն կոլեկտիվ պայմանագրով սահմանվում են՝

1) Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված նվազագույն պահանջների համեմատ սոցիալ-աշխատանքային լրացուցիչ երաշխիքներ,

2) հանրապետական և ճյուղային կոլեկտիվ պայմանագրերով չկարգավորվող կամ դրանց չհակասող և դրանցով նախատեսված պայմանների համեմատ աշխատողների դրությունը բարելավող՝ աշխատանքի պայմաններին, աշխատանքի վարձատրությանը և դրանց հետ կապված այլ հարցերին վերաբերող երաշխիքներ ու արտոնություններ:

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 3-րդ, 7-րդ, 8-րդ և 10-րդ գլուխների համաձայն՝ Կողմերը պարտավորվում են համագործակցել սոցիալական գործընկերության հիմնական սկզբունքներով, իրականացնել աշխատողների և Գործատուի շահերի համաձայնեցումը կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում:

4. Սույն կոլեկտիվ պայմանագիրը տարածվում է համալսարանի բոլոր աշխատողների վրա, բացառությամբ 21-րդ կետի դրույթների, որոնք տարածվում են միայն Արհմիությանը անդամակցած աշխատողների վրա:

2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ

5. Համալսարանի աշխատողների աշխատանքային հարաբերությունները ծագում են համալսարանի ներքին կարգապահական կանոնների 2-րդ բաժնի դրույթներին համապատասխան:

6. Աշխատանքային պայմանագիրը (աշխատանքի ընդունելու մասին Գործատուի ընդունած անհատական իրավական ակտը) չի կարող բովանդակել այնպիսի պայմաններ, որոնք սույն կոլեկտիվ պայմանագրի համեմատ աշխատողի դրությունը վատթարացնող են:

3. ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՀԱՆԳՍՏԻ ԺԱՄԱՆԱԿ

7. Համալսարանի աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմը և դրա առանձնահատկությունները սահմանված են համալսարանի ներքին կարգապահական կանոնների 6-րդ բաժնում, իսկ աշխատողների աշխատաժամանակի և հանգստի ժամանակի լրացուցիչ արտոնություններն ու երաշիքները՝ սույն կոլեկտիվ պայմանագրի 3-րդ բաժնում:

8. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և նվազագույն տևողությամբ համալսարանի աշխատողներին տրամադրվում է լրացուցիչ արձակուրդ:

9. Աշխատողի պահանջով նրան տրամադրվում է չվճարվող արձակուրդ հետևյալ դեպքերում և տևողությամբ՝

1) հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվող, ինչպես նաև մինչև մեկ տարեկան երեխային խնամելու համար արձակուրդում գտնվող կնոջ ամուսնուն (աշխատողին)՝ մինչև 2 ամիս տարվա ընթացքում,

2) աշխատողի ամուսնության համար՝ 5 աշխատանքային օր,

3) հաշմանդամություն ունեցող աշխատողին կամ ընտանիքի հիվանդ անդամին խնամող աշխատողին՝ բժշկական եզրակացությամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ ավելի, քան 25 աշխատանքային օր տարվա ընթացքում,

4) աշխատողի երեխայի ամուսնության համար՝ 3 աշխատանքային օր,

5) աշխատողի ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ 5 աշխատանքային օր:

6) իր ազգային կրոնական օրերը կամ հիշատակի օրերը նշելու համար՝ ոչ ավելի, քան տարեկան 4 օր:

10. Կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում աշխատողին կարող է տրամադրվել չվճարվող արձակուրդ՝ մեկ տարվա ընթացքում ոչ ավելի, քան 60 օր տևողությամբ:

11. Մինչև անընդմեջ աշխատանքի 6 ամիսը լրանալը աշխատողի խնդրանքով ամենամյա արձակուրդ տրամադրվում է՝

1) աշխատող կանանց՝ հղիության ու ծննդաբերության արձակուրդից առաջ կամ հետո,

2) աշխատողի առողջարանային բուժման կարիք առաջանալու դեպքում՝ բժշկական եզրակացության հիման վրա,

3) աշխատողի երեխայի բուժման կարիք առաջանալու դեպքում՝ բժշկական եզրակացության հիման վրա:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ

12. Համալսարանում կատարած աշխատանքի համար աշխատողին վճարվում է հիմնական աշխատավարձ:

13. Գործատուն պարտավորվում է հետևողականորեն իրականացնել միջոցառումներ՝ համալսարանի բյուջեի (պետական բյուջեից ստացված և արտաբյուջեի միջոցներով) ընձեռած հնարավորությունների սահմաններում աշխատողների հիմնական աշխատավարձերի բարձրացման ուղղությամբ: Հիմնական աշխատավարձերի չափերի փոփոխությունը նախապես քննարկվում է Արհմիության հետ:

14. Համալսարանի աշխատողներին վճարվում են հավելումներ, հավելավճարներ, լրավճարներ և հատուցումներ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությանը համապատասխան:

15. Համալսարանում գործող աշխատողների խրախուսման հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերին համապատասխան աշխատողները պարգևատրվում են աշխատանքային պարտականությունները բարեխիղճ, պատշաճ, արդյունավետ կատարելու, երկարամյա աշխատանքի և ծառայության, ծառայողական պարտականությունները գերազանց կատարելու համար:

16. Համալսարանի աշխատողների աշխատավարձը վճարվում է ամիսը մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա 10-ը, անկանխիկ եղանակով՝ աշխատողի նշած բանկային հաշվին դրամական փոխանցումով:

V. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

17. Գործատուն պարտավորվում է՝

1) յուրաքանչյուր աշխատողի համար ստեղծել անվտանգության ապահովման և առողջության պահպանության մասին նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան կահավորված, անվտանգ, հարմար և առողջության համար անվնաս աշխատատեղ և շրջապատող միջավայր,

2) անհրաժեշտության դեպքում սահմանել հատուկ մասնագիտական գիտելիքներ պահանջող աշխատանքների ցանկ, որակավորման պահանջներ և որակավորման քննությունների անցկացման կարգ,

3) Գործատուի սահմանած պարբերականությամբ անցկացնել աշխատանքի անվտանգ կատարման կանոնների վերաբերյալ աշխատողների ուսուցում և հրահանգավորում,

4) թույլատրել աշխատանքի ընդունված աշխատողներին աշխատանքային պարտականությունների կատարմանն անցնել աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության վերաբերյալ Գործատուի ընդունած ներքին իրավական ակտերին և գնահատած հնարավոր ռիսկերի մասին տեղեկացվելուց և անվտանգության հրահանգավորում անցնելուց հետո,

5) իրականացվող աշխատանքի բնույթից կախված՝ հաստատել պարտադիր և պարբերական բժշկական զննություն անցնող աշխատատեղերի ցանկը և բժշկական զննության անցկացման ժամանակացույցը և ըստ այդմ՝ կազմակերպել աշխատողների բժշկական զննումը աշխատանքային ժամերին՝ գործատուի միջոցների հաշվին:

18. Արհմիությունը պարտավորվում է՝

1) լիարժեք աջակցել Գործատուի կողմից աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման ուղղությամբ կատարվող միջոցառումների իրականացմանը,

2) իրականացված ուսումնասիրությունների արդյունքում առաջարկություններ ներկայացնել Գործատուին՝ առանձին աշխատատեղերում աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման վիճակի բարելավման ուղղությամբ,

3) ներկայացնել աշխատանքի ժամանակավորապես դադարեցման առաջարկություն, եթե տվյալ աշխատատեղում առկա են օրենքով և նորմատիվ այլ իրավական ակտերով սահմանված աշխատանքի անվտանգության պահպանման կանոնների կոպիտ խախտման դեպքեր,

4) մշտական հսկողություն իրականացնել մայրության պաշտպանության վերաբերյալ օրենքով սահմանված երաշխիքների և արտոնությունների կիրառման պահանջների նկատմամբ:

19. Կողմերը պայմանավորվում են աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների պատճառները պարզելու նպատակով անցկացնել համատեղ ծառայողական քննություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ՍՈՑԻԱԼ-ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ

20. Գործատուն պարտավորվում է՝

1) նախապես քննարկելով և համաձայնեցնելով Արհմիության հետ՝ համալսարանի յուրաքանչյուր տարվա արտաբյուջետային միջոցների մինչև 2 տոկոսը հատկացնել համալսարանի աշխատողների սոցիալ-կենցաղային խնդիրների լուծմանը հետևյալ հիմնական ուղղություններով՝

ա. սոցիալապես անապահով աշխատողներին, հաշմանդամություն ունեցող աշխատողներին, Արցախյան պատերազմի մասնակիցներին, Հայրենական մեծ

պատերազմի վետերաններին դրամական օգնության տրամադրում՝ ըստ նախապես գնահատված կարիքի,

բ. աշխատողների հանգստի և առողջության պահպանման նպատակով միջոցառումների կազմակերպում,

գ. աշխատողների համար մշակութային և սպորտային միջոցառումների կազմակերպում,

դ. տոնական միջոցառումների կազմակերպում,

ե. սոցիալ-աշխատանքային այլ միջոցառումների կազմակերպում և աջակցության տրամադրում,

2) մասնակի հատուցել ամառային արձակուրդի ընթացքում համալսարանի մարզաառողջարանում աշխատողների և նրանց ընտանիքների անդամների հանգստի կազմակերպման ծախսերը:

21. Արհմիությունը պարտավորվում է՝

1) նախապես քննարկելով և համաձայնեցնելով Գործատուի հետ՝ համալսարանի աշխատողների սոցիալ-կենցաղային խնդիրների լուծմանը հատկացնել Արհմիության միջոցների առնվազն 40 տոկոսը հետևյալ ուղղություններով՝

ա. համալսարանի սոցիալապես անապահով աշխատողներին դրամական օգնություն,

բ. կենսաթոշակային տարիքի հասած և երկարամյա աշխատանքային ստաժ ունեցող համալսարանի աշխատողներին միանվագ նպաստի տրամադրում՝ աշխատանքից ազատման դեպքում,

գ. աշխատողների բուժման ծախսերի լրիվ կամ մասնակի հատուցում,

դ. ֆինանսական աջակցություն Գործատուին և աշխատողներին՝ համալսարանում իրականացվող կրթական, մշակութային, սոցիալական և այլ միջոցառումների ու ծրագրերի իրականացման նպատակով,

ե. աշխատողի կամ աշխատողի ընտանիքի անդամի մահվան դեպքում դրամական օգնության տրամադրում,

2) մասնակի հատուցել ամառային արձակուրդի ընթացքում համալսարանի մարզաառողջարանում աշխատողների և նրանց ընտանիքների անդամների հանգստի կազմակերպման ծախսերը:

22. Համալսարանի մարզաառողջարանում հանգստի կազմակերպման տարեկան ժամանակացույցը, մեկ անձի հաշվով գինը, մասնակի հատուցման չափերը և ուղեգրերի տրամադրման հետ կապված հարցերը քննարկվում են համալսարանի ռեկտորատում և հաստատվում են համալսարանի ռեկտորի կողմից: Արհմիությունը մասնակցում է համալսարանի ռեկտորատի սույն կետում նշված քննարկումներին և իրավասու է ներկայացնել առաջարկություններ քննարկվող հարցերի վերաբերյալ:

23. Արհմիությունն իր կողմից կատարվող, սույն կոլեկտիվ պայմանագրի 21-րդ կետում չնշված այլ ծախսերի հիմնական ուղղություններն ու չափերը նախապես համաձայնեցնում է Գործատուի հետ:

7. ԳՈՐԾԱՏՈՒԻ ԵՎ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

24. Կողմերը՝ յուրաքանչյուրն իր մասով, իր վրա է վերցնում կոլեկտիվ բանակցությունների ընթացքի կանոնների պահպանման, սույն կոլեկտիվ պայմանագրի կնքման և սույն կոլեկտիվ պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարման պատասխանատվությունը: Կողմերի կամ նրանց ներկայացուցիչների մեղքով սույն կոլեկտիվ պայմանագրով իրենց վերապահված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար յուրաքանչյուրն իր մասով ենթակա է պատասխանատվության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

25. Արհմիությունն իրավասու է մասնակցել համալսարանի աշխատողների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական շահերն ու իրավունքները շոշափող հարցերի քննարկմանը և Գործատուին ներկայացնել գրավոր դիրքորոշում քննարկվող հարցերի վերաբերյալ: Գործատուն պարտավոր է Հայաստանի

Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ուսումնասիրել ստացված դիրքորոշումը և գրավոր պատասխանել Արհմիությանը:

26. Աշխատողների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական շահերի ու իրավունքների իրացմանը վերաբերող ներքին իրավական ակտերը Գործատուն կարող է ընդունել՝ հաշվի առնելով Արհմիության դիրքորոշումը: Գործատուն տվյալ ներքին իրավական ակտերի նախագծերը ներկայացնում է Արհմիության կարծիքին՝ դրանց ընդունումից առնվազն 3 աշխատանքային օր առաջ: Արհմիությունը նախագծերի վերաբերյալ իր գրավոր կարծիքը ներկայացնում է Գործատուին՝ դրանք ստանալուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում:

27. Գործատուն՝

1) անհրաժեշտության դեպքում Արհմիությանն ընդգրկում է համալսարանի կառավարման համապատասխան մարմինների աշխատանքներում՝ համալսարանի կանոնադրությանը համապատասխան:

2) երաշխավորում է աշխատողների սոցիալ-տնտեսական հարցերի վերաբերյալ տեղեկատվության անվճար տրամադրումը Արհմիությանը,

3) Արհմիության անդամի սոցիալ-աշխատանքային իրավունքների և շահերի վերաբերյալ Արհմիության միջնորդագրին ի պատասխան ձեռնարկված միջոցների մասին տեղեկացնում է Արհմիությանը տվյալ միջնորդագիրը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում,

4) հնարավորության սահմաններում անվճար տրամադրում է Արհմիության գործունեության համար անհրաժեշտ աշխատասենյակ՝ իր կահավորանքով և տեխնիկական միջոցներով, ինչպես նաև համապատասխան սրահ՝ արհմիութենական ժողովներ (համաժողովներ) անցկացնելու համար,

5) Արհմիության անդամի դիմումի առկայության դեպքում նրա անդամավճարը գանձում է կենտրոնացված կարգով և փոխանցում է Արհմիության հաշվարկային հաշվին տվյալ ամսվա աշխատավարձը վճարելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում,

6) Արհմիության ղեկավար մարմնում ընտրված և հիմնական աշխատանքից չազատված աշխատողներին Արհմիության միջոցառումներին մասնակցելու նպատակով ազատում է աշխատանքային պարտականությունների կատարումից տարեկան 6 աշխատանքային օր ժամկետով և այդ օրերի համար վճարում է տվյալ աշխատողներին՝ յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար նրանց միջին օրական աշխատավարձի չափով:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

28. Սույն կոլեկտիվ պայմանագիրն ուժի մեջ է մտնում 20.10.2021 թ. և գործում է մինչև 20.10.2024 թ.:

29. Սույն կոլեկտիվ պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում փոփոխություններ և լրացումներ կարող են իրականացվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, մեկ Կողմի գրավոր առաջարկությունը մյուս Կողմին ներկայացնելուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում, համատեղ քննարկման արձանագրություն կազմելու միջոցով: Քննարկման արձանագրությունը կցվում է սույն կոլեկտիվ պայմանագրին և դառնում է դրա անբաժանելի մասը: Սահմանված ժամկետում Կողմերի կողմից համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ սույն կոլեկտիվ պայմանագրի փոփոխությունները և լրացումները կատարվում են կոլեկտիվ պայմանագրի կնքման համար Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված ընթացակարգերով:

30. Սույն կոլեկտիվ պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ կոլեկտիվ աշխատանքային վեճ առաջանալու դեպքում այն քննարկվում է հաշտեցման հանձնաժողովում (այդ թվում՝ միջնորդի մասնակցությամբ): Կոլեկտիվ աշխատանքային վեճը չլուծվելու (այդ թվում՝ կոլեկտիվ բանակցությունները չկայանալու, հաշտեցման հանձնաժողովում հարցի քննարկումից հրաժարվելու) դեպքում մնացած ժամկետով շարունակում է գործել սույն կոլեկտիվ պայմանագիրը:

31. Կողմերը համալսարանի աշխատողներին ծանոթացնում են սույն կոլեկտիվ պայմանագրի բովանդակությանը՝ ստորագրելու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում սույն կոլեկտիվ պայմանագրի էլեկտրոնային տարբերակը տեղադրելով Կողմերի պաշտոնական կայքէջերում:

32. Սույն կոլեկտիվ պայմանագրի կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են այն ստորագրած Կողմերը և (կամ) նրանց լիազորած ներկայացուցիչները:

33. Կողմերը կամ նրանց լիազորած ներկայացուցիչները տարին մեկ անգամ համալսարանի աշխատողների կոլեկտիվին են ներկայացնում հաշվետվություն սույն կոլեկտիվ պայմանագրի կատարման մասին:

34. Արհմիությունը հավաստում է, որ սույն կոլեկտիվ պայմանագրի նախագիծը մինչև ստորագրումը քննարկվել և 20.10.2021 թ. հավանության է արժանացել համալսարանի աշխատողների ժողովի (համաժողովի) կողմից:

35. Սույն կոլեկտիվ պայմանագիրը ստորագրվել է երկու հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող օրինակից: Յուրաքանչյուր Կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ:

Գործատուի կողմից

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտոր

Դ. Գալոյան

Աշխատողների կողմից

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության արհեստակցական կազմակերպության նախագահ

Ա. Պետրոսյան